

85
4-39

3651

9X 2003

3651

28515-4-2

Խ Պ Ա Տ Տ Ո Ւ

ՅԵՐԱ

4-39

Կ Ա Մ

ՀՐԱՀԱՆԳԻՉ ԲԱՐՈՅԱՎԵՊՔ

ՄԱՆԿԱՆՑԱՄԱՐ

Թարգմանաբար Հայարեց
Ահետիս Թ . ԿԵԶԻՒՐԵԱՆ
ԴԻ ԱԶԱՋԻՐԿ Թ . ԿԵԶԻՒՐԵԱՆ ՍԵՐԱՍՏԱՅԻՈՅՆ



Կ . ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՊՈԽԱՆԱԳՅԻ Խան

1884



11506-57

Ի վաղուց հետև վափարող էի ուսմանց և ցանկացող ազգային յառաջդիմութեան :

Տարի ու կեսի չափ առաջ, մինչ առանց դասառուի կը պարապէի յուսումն Անգլիերեն լեզուի, որը չը յաջողեցայ ձեռք բերել կարի աներպաստ պարագայից պատճառաւ, եոյն լեզուին ընթերցաբանաց մէջ տեսնելով հասուածեեր, որք ձիշդ իրենց նպատակին յարմար այն է մանկական լեզուաւ զրուած բուելով ինձ, զայնս ի հայ յեղունց օգտակար համարեցի. ոյց վրայ բարդեցի յետոյ Տիկին Բաբ-Գարբանդիկի զործերեն մէկ քանի ընտիր կոտրներ եւս, եւ անս պայօք իմ հօր բարգմանած եւ յօրինած երկու առակեներ եւս սոյնին կցելով, կը նամարձակիմ ի լոյս տոյ :

Կարի պարզ լեզուով աշխատած եմ բարգմանել զատներ, վափարելով որ սոյնն ընթերցող իմ փորքիկ հայ եղբայրներն անբերի հասկնալով օգուտ մը կրնան քաղել անկէ :

Կը յուսամ քէ ընթերցաւէր հասարակութիւնը, պիտի քաջալերէ զիս իմ այս դոյզն ալլ օգտակար ձեռնաբակին մէջ, որով ապագային մէջ առաւել օգտակար երկ մը հրատարակելու առիրն ունենամ քերեւս :

Քաջալերն յառաջդիմութեան զապանակն է, բաղձանքներս անսաման են, այլ նիւրական քէ բարոյական կարողութիւնը կարի սահմանառ :

1884 Նոյ. 4/16

Թարգմանիչն

Կ. Պոլիս

Խ Ր Ա Տ Տ ՈՒ

Կ Ա Մ

ՀՐԱՀԱՆԳԻՉ ԲԱՐՈՅԱՎԵՊՐ

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ

Ա. Ա.

ԲՈՐԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Խեղճ հնաղղեստ տղայ մը՝ օր մը գըպ-
րոց գնաց, ուր երեսը լաւ մը լուացեր էր.
մինչ տուն կը դառնար, դրացիները զարմա-
նալով անոր նայեցան և «իրաւ տափկայ Լեռո-
նին կը նմանի, բայց այն պիտի չըլլայ, ըստն.
որովհետև խիստ մաքուր է»:

Իւր մայլն ալ նոյն տտեն անոր նայելով
երբ անոր երեսն այնչափ մաքուր ըլլալը տե-
սաւ, խորհեցաւ թէ իւր գէմքը խիստ աղ-
տուտ էր, և իսկոյն լուաց զայն :

Քիչ տտեն ետք հայրն ալ իւր աշխա-
տութենէն տուն դալով, և իւր կինն և որ-

դին այնչափ մաքուր տեսնելով, մոտածեց
թէ իւր գէմքն աղտոտ էր, և անոնց օրի-
նակին հետեւեցաւ :

Հայրը, մայրն և որդին մաքրուած ըւ-
լալով, մայրն սկսաւ խորհիլ թէ սենեակն
աղտոտ կ'երևնար. ուստի անմիջապէս ծնկան
վրայ գալով տախտակամածը մաքրեց :

Վին մը որ քովի տունը կը բնակէր, եր
դրացին տան մէջ այսչափ մեծ փոփոխու-
թիւն տեսնելով, խորհեցաւ որ եր գէմքն
և իր սենեակը խստ աղտոտ էին. ուստի
ինքն ալ անմիջապէս զանոնք մաքրել սկսաւ :

Ա.յո պատմութիւնը կը ցուցնէ, թէ
ի՞նչպէս երկու տուներ և անոր մէջ բնակող-
ները, հնազգեստ գպրցական տղու մ'երե-
սին մաքրութեան պարզ օրինակովը մաքուր
և հաճելի էին եղեր :

Տղաքներն ինչպէս նաև հասակաւոր մար-
դիկ պէտք է միշտ բարի օրինակ տան : Ան-
կարելի է մեզ կատարելապէս զիտնալ թէ
ո՛րչափ բարիք յառաջ կը գան այս ճամբով,
ոչ ալ կարող եմք բացատրել, թէ ո՛րչափ
չարիքներ կը հետեւին չար օրինակէ մը :

Թեամբն և ճարտարութեամբը կար կը կարէր:
Բայց հակառակ ասոր, անոնք իրենց ա-
մեն պէտքերուն բաւելու չափ ստակ չէին շա-
հեր. և շատ անդամ խեղճ մայրն ինքդինք
դրկելով իւր աղջկան պէտք եղածը կը տար:

Մայրն և աղջիկն ի բոլոր որտէ զիրար կը
սիրէին և սրտակից մտերմութեամբ իրարու-
յարած էին : Աղջիկն իւր մայրը միփիժարելու-
համար բարի վարք ունենալու կ'աշխատէր,
իսկ մայրն իւր աղջիկը կրթելու և դրույունե-
լու համար իւր բոլոր ջանքն 'ի գործ կը գնէր:

Երկուքն ալ շատ կը սիրէին ծաղիկները
բայց որովհետեւ պարտէզ չ'ունէին, պատա-
զաբոյսի (1) (volubilis) հունաեր ցաներ էին փոք-
րիկ փայտէ սընտառիկի մը մէջ, որ արեւուն կող-
մը գտնուող պատուհանի մը մէջ դրուածէր :

Երբ պատաղաբոյսերը ծլիլ սկսան, այն
օրը մեծ տօնի օր մ' եղաւ. մեծ խնամք կը
տանէին անոր. կը ջրէին, կը լուային զանի
և մէկդի կ'ընէին այն միջատները, որք կը բ-
նային փսասել այս սիրեցեալ փոքրիկ տունկե-
րուն :

Բայց միայն մեծնալը բաւական չէր,

(1) Պատաղձի տեսակ մը, "որ գանդակի ձեռվ ծա-
դիկներ կը բանայ :

արդիւնք ալյառաջ բերելու էին. և պատազարոյսերն իրենց սրտի ձևով կարատուած տերեւներուն մէջտեղ բազմաթիւ կոճակներ յառաջ բերին :

Առջի բերան այս կոճակները մնդուսէ փոքրիկ գնաւակներու կը նմանէին . բայց անոնք ամէն օր իրենց տեսութեան եկող արեգական ճառագայթից չնորհիւ երթալով աճեցան. և առաւօտ մը պատուհանը բանալու ատեննին , մայրիկն և փոքրիկ աղջիկն իրենց պատազարոյսը ծաղիկներով ծածկուած գտան :

Սբանչելի ծաղիկներ էին անոնք , զանգակներու ձևով և ամեն գոյներով : Որը ճերմակ էր , որը վարդի , որը շեփորուկի գունով , որը բաց , որն ալ կուշտ կապոյտ : Եւ այս ծաղիկները պատող կերպամն այնչափ նուրբ էր , այնչափ կակուղ մաղերով ծածկուած , և իր գոյներն այնչափ շատ էին , այնչափ անուշ , այնչափ հաճելի կերպիւ իրար խառնուած , որ զայս տեսնելով երկու պարտիզապանուհիներն ուրախութեամբ լեցուած՝ իրարու վիզ վամթթուեցան և եռանդադին զիրար գրկեցին ,

Իրենց խօսքերն էին : « Ահ , ոհ , ստ ծա-

ղեկը նայէ , հապա ստ , հապա նտ , տեսնենք ամենէն գեղեցիկը որս պիտի գտնեմք . » և ուրիշ ասոր նման խօսքեր :

Արեւ բոլոր այս ծաղկանց կոկոնները բացուեցուցեր էր , և անոնց վրայ կը շողշողէր , որպէս թէ իւր գործը գգուելէ հածոյք զգայ : Եւ պատազարոյսերն իրենք ալ իրենց դիւրաթեք ցօղուններուն վրայ չնորհալից կերպով կը գտնային , արեւուն ճառագայթները փնտուելու և որպէս թէ անոնց շընորհակալ լինելու համար :

Ամբողջ օրը շարունակ հիացման մէջ անցուցին . մայրիկն և աղջիկն իրենց ծաղիկներուն վրայ խօսելէ չէին դադրեր : Երբեմն երբեմն աչքերնին կարին վրայէն դէպի պատազարոյսերը կը վերցնէին : Ետքը մայրիկն և աղջիկն իրարու կը նայէին ծիծաղ երեսով մը՝ որ իրենց գոհունակութիւնը կը յայտնէր :

Բայց այս երջանիկ օրն ալ ուրիշ օրեւրուն պէս սիտի լմնար : Խրիկունն եկաւ և փոքրիկ աղջիկը տեսաւ , որ պատազարոյսին բոլոր ծաղիկներն , որոնք առաւօտէն ՚ի վեր այնչափ զուարթութեամբ բացուած էին , մէկմէկու ետեւէ տիրութեամբ նորէն կը գոցուէին :



Սանկիկն ապշած երկինքը նայեցաւ , ա-
րեւը գնտուեց , բայց ո՞ւր է արե . աներե-
ւոյթ եղեր էր այն :

«Ո՞հ , մայրիկ , դոչեց նա , ալ արեւ չի-
կայ , և ահա ծաղիկները կը կորսուին : Ո՞հ ,
մեր ազուորիկ ծաղիկները , խեղճուկ ծաղիկ-
ները : Արեւ մարեցաւ և մեր ծաղիկները
մեռան :

—Վստահ եղիր զաւակս , ըստ իրեն
իւր մայրը . արեւ չէ մարած , և մեր ծաղիկ-
ներն ալ չեն մեռած : Արեն այս վարդկենիս
ուրիշ աշխարհներու մէջ ուրիշ ծաղիկներ կը
բանայ , և մերիններն ալ անոր դառնալուն
սպասելով կը քնանան . վաղն առաւօտ արեւը
նորէն պիտի երենայ և մենք նորէն ծաղիկնե-
րուն բացուելը պիտի տեսնեմք :

Եւ ստուգիւ հետեւեալ օրն արեւը նորէն
երեցաւ , և առջի օրուընէն աւելի գեղեցիկ
և աւելի բազմաթիւ ծաղիկներ բացուեցան :

Այն ատեն մանկիկը մխիթարուեցաւ .
մայրիկը զանիկայ իւր ծունկերուն վրայ ա-
ռաւ և դգուելով այսպէս ըստ :

«Ալ ջիկս , կը տեսնե՞ս այդ արեւ , անի-
կայ բարի Աստուծոյ տեսանելի պատկերն է .
քիչ մը ատեն մեզմէ հեռացածի պէս կերե-
քիշ

այնուն կուպանք

նայ , բայց միշտ ետ կը գայ և երբէք զմեզ չը
թողուր : Եւ ինչպէս որ ստոյդ է թէ արեւը՝
գիշերէն ետք նորէն ցերեկ պիտի բերէ , նոյն-
պէս ստոյդ է թէ Աստուծած ալ աշխատու-
թենէն ետք մեզի վարձք պիտի տայ :

Աշխատինք ուրեմն փոքրիկ աղջիկս , աշ-
խատիմք . համբերութեամք կրեմք մեր վիշ-
տերն և յուսամք Աստուծոյ , ինչպէս ծա-
ղիկներն արեւուն կը յուսան . որովհետեւ մեր
երջանկութեան յոյսերէն գէթ այս մէկը կայ
որ անտարակուսելի է , և երբէք պիտի չը
խարուի :

Ե

ԵՐԵԲ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ջմեռուան ցուրտ ատեններն էր , մինչ
վատկներուն ջուրերը կը սառին , մինչ ծա-
ռերուն վրայ այլ ևս տերև չը մնար , և մինչ
այլես թռչնոց երգերը չեն լսուիր դաշտե-
րուն մէջ :

Երկիրը բոլորավիմ ծածկուած էր , և
որչափ հեռուներն արձակէր մարդ իւր նայ-
ուածք , ուրիշ բան չ'էր տեսներ , բայց եթէ

բոլորին ճերմկած դաշտը , եղեամներսվ ծածկուած բլուբներն և ծառերը , որք ալեւոր ծերի մը կը նմանէին :

Գիւղին բոլոր տնակներուն վրայէն վառարանին ծուխերուն բարձրանալը կը տեսնուէր . որովհետեւ բոլոր գիւղացիք կրակին բոլորտիքը շարուած՝ իրենց սառած մատները կը տաքցնէին , և պատուհաններէն տիսուր և ամսյացեալ դաշտը կը դիտէին :

Միքայէլ և Կատարինէ խեղճ ընտանիք մը կը կազմէին , որոնք ձմեռուան սաստկութենէն խիստ կը տանջուէին քանզի աղքատէին . տնակն աղէկ պատսպարուած չ'էր , և հովը դուռներուն և պատուհաններուն ճեղքուածքներէն ներս կը վշէր և իրենց մարմբորդ կրակը նորէն վառելու բաւական փայտ չունէին :

Իրենց շուրջը կը նստէին երեք փոքրիկ տղաքներ , զորս խանդաղատամօք կը սիրէին . անդրանիկը Պարեգին՝ տասը տարեկան , Վահան ութ տարեկան , և Պարոյր վեց տարեկան :

Սյսու ամենայնիւ այս փոքրիկ տղեկները կը տեսնէին որ իրենց հայրիկն և մայրիկը ցուրտին սաստկութենէն կը նեղուէին : Ուստի

ըսին իրարու . « Եկեք անտառն երթամբ , գետինն ինկած ճիւղերը ժողվեմբ և տուն բերենք » :

Ուստի մեկնեցան իրենց ոտքով կոխուելով ձիւնը որ ճամբան լեցուցեր էր , և աղարակին շաւիղները դոցեր : Եւ ահա մէկէն իրենց տնակն աշքերնէն կորուսին . և հովին՝ ծառերուն գագաթներէն թափած ճիւղերը ժողվելով , անտառին մանուածապատ շաւիղներուն մէջ խորասուզուեցան :

Բայց երեք եղբայրներն այսպէս զբաղած լինելով , զիշերուան մօտենալը չ'էին նշմարեր : Եւ մինչ իրենց խրճիթէն հեռու , խիստ հեռու կը գտնուէին , արեւուն մարը մըտնելը տեսան , և խրճիթնին գառնալին ալ արդէն անկարեիլ էր : Այս ատեն բեռները շալկել և գիւղը դառնալու համար ճամբայ ելնել փութացան :

Բայց ճամբան դժուարին էր . ձիւնը ճամբուն հետքերը դոցեր էր , և իրենց ոտքերուն կպչելով փայտեայ մուճակնին այնչափ կը ծանրացունէր , այնչափ , որ քիչ մը ժամանակ ետք յոդնութենէն ուժաթափ , փոքրիկ Պարոյրն այլ եւս չը կրցաւ քալել :

Ի՞նչ ընելու էին այս ծայրագոյն անձկու-

թեան մէջ . իրենք մինակ էին , անտառը խոր էր և ամայի . բնաւ և ոչ մէկ կողմ մը չէին նըշ-
մարեր լոյս մը , որ մերձակայ ընակարան մը
կենաւն իրենց իմացնէր . եթէ պոռալ ուղէ-
ին , այս տիսուր ամայութեան մէջ կը թնդար
իրենց ձայնը , զոր խոշոր ծառերուն արձա-
դանգներն իրենց կը գարձնէին :

Անդրանիկը , քիչ մը ժամանակ Պարոյրն
իւր կոնակն առնելու փորձ մ'ըրաւ . բայց
բեռը խիստ ծանր էր , կանգ առնել հարկ ե-
ղաւ . և երեքը մէկէն սկսան լալ :

Ցուրտը խիստ սասափի էր , կծու հով մ'ա-
նայ երեսներուն կը փչէր , և իրենց արտա-
սութիւն իրենց այտերուն վրայէն վաղած ատեն
կը սառէին . իրենց ձեռքերը ցուրտէն թըմ-
րեր էին , և իրենց ստքերն ալ չ'էին կրնար
շարժիլ :

Այն ատեն երեքն ալ իրար փաթտուեցան .
անդրանիկը Պարեգին , տեսնելով որ իւր
կրտսեր եղբայրը փոքրիկ Պարոյրը բոլորվին
մսեր և սառ էր կտրեր , զանիկայ իւր կուրծ-
քին վրայ սեղմելով տաքցնել ջանաց :

Բայց իր սոյն նպատակին համնիլ չը կըր-
նալը տեսնելով , բնաւ չը վարանեցաւ . հանեց
իւր հանդերձն և ինքըինք ցըստաշունչ հալին

և բուքերուն տակ դնելով , անով խեղճ տը-
զեկը ծածկեց . կը լար , բայց մանաւանդ իր
եղբայրներուն համար կը լար , և զանոնք
քաջալերել կը ջանար :

Բայց խրծմին մէջ եղողները խեղճ տղա-
յոց եւս չը դառնալը տեսնելով , մեծ անձ-
կութեան մէջ կ'ինկնէին . երբեմն երբեմն հայ-
րըն և մայրը դրան սեմոց վերայ կ'ենէին ,
իրենց աշքին տեսնել կրցածին չափ հեռու-
ները կը դիտէին , բայց բան մը չէին տես-
ներ :

Շատ անդամ «Պարոյր , Պարեգին , Ամ-
հան» կը պոռային . բայց բնաւ ձայն մ'իրենց
չէր պատասխաներ , և ուրիշ բան չ'էին լսեր ,
բայց եթէ քանի մը շանց հաշիւնը , որք միայն
դաշտին լուռթիւնը կը խանգարէին :

Գիշերը կը յառաջէր , ուստի անձկու-
թեամբ գուրս երան . քանի մ'ուրիշ գիւղա-
ցիներ ջահէր առած , տղաքները վնասելու
համար անոնց ընկերացան :

Գտան խեղճ տղաքները : Գլութիւն աղ-
դող տեսարան մ'էր այս , ցուրտէն ընդար-
մացեր և կարծես թէ մեռեր էին : Կը տես-
նէին թէ ինչպէս Գարեգին իւր հանդերձն
հանելով , անով իւր փոքրիկ եղբայրը ծած-

կեր էր . ապա զանիկայ չը կրնալով ուժաբերել , իւր եղբայրական գորովանօք , անոր՝ հովին ու ձիւմին դէմ պատսպարան մըլլալու համար խեղճ աղեկին մարմայն վրայ պառկեր էր :

Ամէն ոք այս անձնուիրութեան վրայ ըսքանչացաւ . մարդիկ փոքրիկ տղաքներն իրենց բազկաց մէջ առին , և խրծիթը բերին . մեծ կրակ մը վառեցին , և տղայքն խական ուշաբերեցան : Հարկ չէ ըսել թէ որչափ ուրախութեամբ դիրար գրկեցին և իրենց ծընողաց գիրկը նետուեցան :

¶

ԼՈՅԸԸ

Ատենով գիւղ մը կար :

Այս գիւղին մէջ պարկեշտ , աշխատասէր և խիստ բարեպաշտ գիւղացիներ կը բնակէին :

Օ՛ մը ծննդեան ճրագալոցըն էր . այն գեղեցիկ և յանկուցիչ ածնին , յորում կը տօնուի ծննդեան տարեդարձը մեր Փրկին , որ փոքրիկ Յիսուս մանկան կերպարանքով , իւր մօր , սուրբ և քաղցրիկ Կոյս Մարիամին բազ-

կաց մէջ պառկած , շատ ժամանակ առաջ , զմարդիկ փրկելու համար յաշխարհ եկաւ :

Մէկ խօսքով , կէս գիշերուան պատարագի օրն էր :

Գիւղին գիւղապետն իւր փոքրիկ տղաքներուն խոստացեր էր , որ գիրենք իրենց մայրիկին հետ պատարագի տանի : Բայց այնչափ գիւղին գործ մը չէր այս վասն զի եկեղեցին քաղաքին մէջ գիւղէն երեք քառորդ մզնն հեռու կը գտնուէր . և տղայոց փոքրիկ սրունքներով երեք քառորդ ժամ պէտք էր հոն համնելու համար : Բայց ուրախ և ուժեղ տղայոց համար , այս ճամբորդութիւնն աւելի հաճոյք մ'էր :

Ինչպէս զիտէք , փոքրիկ բարեկամներս , ծնունդը յունվարի Եին այսինքն ամենէն ցուրտ եղանակին կը հանդիպի : Այս եղանակին , օրերը կարճ են և գիշերները երկայն : Հովկը վչէ , ցուրտ կ'ըլլայ , անձքեւ կը գայ , ձիւն կը գայ : Ամենէն քաղցրիկ տօնը որպէս թէ միխթարութեան համար ապրւոյն ամենէն ախուր եղանակին կը հանդիպի :

Պ. Գիւղապետին աղայոց համար իրիկունը խիստ երկայն եղաւ :

Ամէն օր տղաքներն իրիկուան ժամը ել-

կուրին կը պառկէին, բայց սոյն օրը բոլորով վին չը պառկեցան. օրինակի համար, մինչև մեկներու ժամանակնեն Տիրան իւր աթոռին վրայ քիչ մը քնացաւ, և Շուշան ալ գլուխն իւր մօր ծնդաց վրայ դրած, մրափ մ'առաւ :

Բայց ժամը հինգին միջացները զանդակներուն ձայնը հնչեց գիշերուան մէջ. և արթոցուց մեր փոքրիկ աղաքները, որք խիստ ուրախացան զայս լելով :

« Եկէ՞ք, կ'ըսէին կարծես զանդակները, եկէ՞ք, փոքրիկ քրիստոնեայներ. շուտով պիտի համնի ժամն, յորում փոքրիկ մանկիկն Յիսուս, ձեր Աստուած եղբայրը, ձեր Փըսկութետն համար ծնաւ. Կա ձեզի կը դայ, դուք ալ իրեն եկէ՞ք :

« Գիշերը մթին է, իրծիթներուն մէջ ցուրտ կ'ընէ, բայց դուք լոյս ալ ունիք, կրակ ալ. Յիսուս մանուկը, ձեր Աստուած եղբայրը, ոչ կրակ ունէր, ոչ բոց, Եկէ՞ք, եկէ՞ք :

« Հովը կը փչէ ու կը մոնչէ դրանց առջև. ցուրտը ճամբայները կը սառեցնէ. բայց դուք լաւ պատոպարուած մուճակներ ունիք, լաւ տաքնող հանդերձներ, և մանկիկն Յիսուս, ձեր Աստուած եղբայրը, մերկ

էր, ցուրտ յարդերու վրայ, ախոռի մը մէջ ուր ամէն կողմէ հովերը կը վշէին : Եկէ՞ք, Քրիստոնեայներ, ապերախտ մի ըլլաք. Եկէ՞ք, եկէ՞ք, եկէ՞ք :

Եւ զանդակներն ասիկաց ըսելով, իրենց ձայները կը բարձրացնէին, և զայնս քնացած դիւզին կարելի եղածին չափ հեռուները կ'արձակէին :

« Երթա՞նք, գոչեցին տղաքները. գիշերուան պատարագն է որ կը հնչէ : » Զայս ըսելով, անմիջապէս ամէնն ալ իրենց վերարկուները հագան, ձեռնոցներնին ձեռքերնին անցուցին, գլխարկնին դրին, և ահա հայրիկը, մայրիկն և տղաքները Եկէ՞ք եցւոյն ճամբան բանեցին :

Վիշերը մութ էր, ահնչափ մութ որ իրենց առջև խոկ չէին տեսներ. բարեբախտաբար փոքրիկ ընտանիքն այս ճամբան աղեկ կը ճանչնար :

Այսու ամենայնիւ գիւրին բան չ'էր այս խորին մթութեան մէջ քալել: Ամբողջ դաշտին երկայնութիւնը փոքրիկ շաւկիներէ անցնելու էր, մացառներու քովէ երթալու էր, որոց մորենիները գեմքերուգ կը զարնուէին. կամ քալելու էր զառիվայր որմեզ-

բերէ , որոց վերայէն շատ անդամ ոտքը կը
սահէր : Երբեմն ջրալից փոսի մը վրայ դը-
րուած գէշ տախտակի մը վրայէն քալելով
անցնելու էր , երբեմն ալ ցանկի մը վրայէն
ոտն առ ոտն անցնելու կամ խոչոր դուռ մը
բանալու էր . և այս ամենը պէտք էր կա-
տարել խարխափելով և իրարու զարմուելով :
Ինչպէս կը տեսնէք , շատ հաճելի բան մը չէր
այս :

Ամենէն առաջ Շուշան զգաց զայս . լուռ
ու մունջ կեցաւ . իւր մօրը մօտեցաւ և անող
ձեռքէն բռնեց : Մթութեան մէջ քայլելու
սովորած չէր . ուր ըլլակը հաղիւ կը դիտ-
նար . ի զուր խաչոր խոչոր կը բանար աչքե-
րը , գիշերը միայն կը տեսնէր . ձայները կը
լսէր , բայց չէր կրնար անձերը որոշել : Շու-
նը որ անոնց կը հետեւէր , յաղթանդամ Գո-
ղիաթը , հաշելով անոր քովին կ'անցնէր ու կը
դառնար և այս բանը զի՞նքը կը դոզացնէր .
վերջապէս բու մը , որ հին կաղնիի մը մէջ
բոյն դրեր էր , յանկարծ տգեղ աղաղակ մը
արձակելով թռաւ , և Շուշան բոլորովին նեղ-
ուած՝ իւր մօրը պլուեցաւ :

« Ես բնաւ չեմ սիրեր մութն , ըսաւ իւր եղ-
րօր Տիրանին . մարդ ոչ իւր ինչ ընկը գիտէ ,

ոչ ուր երթալը . ոչ իւր հայրիկը կը ճանչէ ,
ոչ իւր մայրիկը : Զեմ*հասկնար թէ ի՞նչպէս
Գողիաթ որպէս թէ կէս օր ըլլար , ուրախ
զուարթ կը վաղէ ու կը ցատկէ :

— Շուները գիշերը կը ծաղրեն : Պատաս-
խանեց Տիրան :

— Ինչո՞ւ համար գիշերը կը ծաղրեն , հար-
ցուց Շուշան :

— Ինչո՞ւ համար , տէր ողորմէա , պա-
տախանեց Տիրան , ինչո՞ւ . . . վասն զի շուն
են :

Մայրիկը լուռ կը կենար , բայց մտիկ կ'ը-
նէր երկու տղոց ըսածները :

Սոյն միջոցին ագարակի մ'առջեւէն կ'անց-
նէին . ագարակապանն և իւր սպասաւորք գի-
շերուան պատարագին կ'երթային , և անոնց
մէ մին ուետնաջան մը բռնած էր :

Այս ջահը մեծ բոց մը կ'արձակէր , որ
կարմրագոյն էր , և բոլորովին ծխաշունչ . բայց
թէև խիստ մեծ ծուխ կը հանէր , այսու ա-
մենայնիւ այս բոցը քիչ մը կը լուսաւորէր
ճամբան . և Շուշան մութէն աղատելոն վը-
րայ ուրախացած , գոչեց . « ո՞հ , ո՞չափ ա-
զեկ բան է լոյսը : »

Գողիաթ այդ լոյսը չը նշմարեց անդամ .

և շարունակեց թափառիլ հոս հոն ամփառիր ,
ջահին լուսոյն և խրամերուն ստուերաց մէջ :

Եւ զանգակները միշտ կը հնչէին , և քիչ
քիչ եկեղեցւոյն կը մօտենային , ուր հասան
վերջապէս :

Պատուհանին փոքրիկ շեղանկիւն ապակի-
ներուն մէջէն , ներսի պաժառութիւնը նըշ-
մարեցին դուրսէն : Բայց երբ եկեղեցին մը-
տան , տղաֆներն իրենց ուրախութենէն խել-
քերնին թոռուցին : Հարիւրաւոր մեղրամոմեր
և ճարպամոմեր տատ խորանն և դասերը կը
լուսաւորէին . և եկեղեցւոյն մէջ տեղն երկու
կարգ կանթեղակիր ջահեր , շլացուցիչ պայ-
ծառութիւն մը սփուէին չորս դին :

Այս պայծառութիւնն այնչափ աննման էր
ուետնաճրագին , որչափ ուետնաճրագն աննը-
ման էր խոր գիշերոյն :

«Ո՞հ , ի՞նչ գեղեցիկ է , ի՞նչ գեղեցիկ բան
է լոյսը , կը կնեցին յած ձայնով եղբայրն և
քոյրը , ո՞րչափ կը փայլի ամէն բան . կարծես
թէ ամենաստորին զարդերն անդամ աղա-
մանդէ և ոսկիէ են :

— Եւ ամենէն զարմանալին սա է որ , յա-
րեց Տիրան , մի և նոյն ժամանակ ինչ որ գե-
ղեցիկ է աւելի գեղեցիկ կ'երեւնայ , և ինչ

որ տգեղ է կը կորսուի , կամ նուազ տգեղ
կ'երեւնայ : Նայէ մէկ մը , Շուշան , սա հին
անզարդ ատաղձներուն , սա խորսութերուտ
պատերուն , սա նորոգուած սուրբի արձա-
նին . այլ եւս անոնց տգեղութիւնները չեն
երեւնար . անոնք եկեղեցւոյն շրեղ լուսաւո-
րութեան մէջ կ'աներեւութանան :

Եւ մինչդեռ կը սքանչանային և կ'աղօթէ-
ին , Պողիաթ շունը գնացեր պահարանը պառ-
կեր էր , ուր ժամերգութեան ամբողջ տեւո-
ղութեան միջոցին լաւ քուն մը քաշեց :

Բայց մայրիկը , որ նա ալ կը սքանչանար
և կ'աղօթէր , միշտ մտիկ կ'ընէր իւր երկու
աղայոց ըսածները :

Վերջապէս արարողութիւններէն , գեղե-
ցիկ շարականներէն ետք , պատարագը լը-
մընցաւ և մնմերը մարեցան : Այն ատեն Շու-
շան և Տիրան իրենց տուն գառնալուն վրայ
մտածեցին և իրարու ըսին :

«Ճամբան տակաւին մութ է , և մեք այս
գեղեցիկ լոյսը տեմնեինէս ետք , մեղի առաջ-
նորդելու համար ուետնաջահ մ'անդամ պիտի
չունենամք : »

Բայց ո՞րչափ մեծ եղաւ իրենց զարմանքը ,
երբ եկեղեցիէն ենելու առեննին գաշտը

պայծառպէս լուսաւորուած - գտան : Գիշեր-
ուան պատարագի միջոցին , լուսինն և բաղ-
մաթիւ աստղեր հարիզոնին վրայ բարձրացեր
են , և անոնց լոյսը երկիրը կ'ողողէր :

Տղաքներն երկնից վրայ այսպիսի գեղեցիկ
Յունփարի գիշեր մը չ'են տեսեր . մեծ աստ-
ղեր , և աւելի մեծ երեւցող մոլորակներ ,
արեւներու պէս կը փայլէին ու կը շողչողէ-
լին . Ծիր կաթինը , կամ Յարդդողի հերա-
քը (1) երկնից մէկ կողմէն մինչեւ միւս կողմը
կը տարածուէր , աստղերու գետի մը պէս :
Եւ Լուսինն որուն բիծերը զինքը երկրէս
մարդու գէմքի մը կը նմանցնեն , լուսինն յամ-
բարայլ կը յառաջէր օդոյն մէջ , ուր ամպ
մ'անդամ չ'էր ծփեր :

Աստղերուն սոյն լուսաւորութիւնն այնչափ
գերազանց էր եկեղեցւոյն ձէթի և մեղա-
մոնի լոյսէն , որչափ գերազանց չ'էր ձէթի և
մեղամոնի լոյսը ուետնաճրագի լոյսէն ,

Այս անդամ ճանրան կարճ թուեցաւ տր-
զոց . որք հիացած , ապշած կը քայլէին գլուխ-

(1)Յոտ Հայկական դիցաբանութեան , Վահագն
Բարչամ Ասորւոյ յարգերը գուցաւ . եւ իր եղանց
տալու համար երկինքը տարած ատեն ճամբան թա-
փեցան : Ասկէց յաւած եկաւ յարդ գողի հետքը :

Ծ. Թ.

Նին վերցուցած դէպի երկինք , որմէ իրենց
նայուածքը չ'են կրնար զատել . մինչդեռ
Գողիաթ անոնց կը հետեւէր գլխիկոր , կի-
սաքուն վիճակի մէջ , իւր բոյնին վրայ միայն
խորհելով :

Վերջապէս տուն հասան , փոքրիկ գիշե-
րընթրակ մ'ըրբին , և ետքն ամէնն ալ պառ-
կեցան :

Տղաքներն ինչպէս կը գուշակէր , շուտով մը
քնացան . իրենց քնացած միջոցին ուրիշբան
չ'երազեցին , բայց եթէ մութ գիշերը , կէս
գիշերուան պատարագը , և աստեղազարդ-
երկինքը : Եւ այնչափ երազեցին , որ ցորեկ-
ուան ժամը հինդին զանոնք արթնցնել հարկ
եղաւ :

Սմենագեղեցիկ օր մը կը յաջորդէր ամե-
նագեղեցիկ գիշերուան . արեւն իւր բոլոր
պայծառութեամբը կը շողչողէր , և աղաք-
ներն իրենց ձեռքերն իրենց աչաց վրայ դը-
նել ստիպուեցան : Ո՞հ , ցորեկուան այս լոյ-
սը ո՞չափ տարբեր կերպով գեղեցիկ էր գի-
շերուան լոյսէն : Տղաքները շատոնցուընէ ի-
վեր կը ճանչնային արեւը . բայց մժուռթիւնը
ճանչնալին ի վեր այնչափ գեղեցիկ կը գըտ-
նէին զայն , որ իրենց այնպէս կ'երեւէր թէ
3

առաջին անգամ կը տեսնէին : Շուշան գնաց պատուհանը բացաւ . առաջին տեսած բանը Գողիաթն եղաւ , որ բակը գեղեցիկ արեւուն ճառագայթից տակ պառկած ուկոր մը կը կըծէր . . . :

« ԱՌ , այս շունը գիս անհամբեր կ'ընէ , բաւ իւր մօր : Նայէ՛ , բան մ'ալ իրեն աղդեցութիւն չ'ըներ . մուժ , լոյս , արեւ , ամէնն ալ իրեն անտարբեր են :

— Որովհեաեւ , բաւ մայրը , Գողիաթ շուն մ'է և ոչ մարդ մը :

— Այսու ամենայնիւ , բաւ Շուշան , անիկայ ալ աչքեր ունի տեսնելու համար :

— Շունք տեսնելու համար աչքեր ունի , պատասխանեց մայրիկը , բայց հոգի չ'ունի զայն հասկնալու համար :

— ՈՌ , կրկնեցին Տիրան և Շուշան միասին , մեք խիստ աղէկ հասկցանք այս գիշեր , և աւելի աղէկ կը հասկնանք այս վայրկենիս , թէ լոյսը երկինքէն կը գայ , թէ Աստուծոյ է այն , և թէ Աստուած է որ իւր բարութեամբ մեզի կը զրկէ զայն , զմեղ այն սոսկալի մութէն աղատելու համար :

— Աղէկ ըսիք , զաւակներս , կրկնեց մայրիկը . ամէն լոյս Աստուծմէ կը գայ , բարե-

ւուն լոյսն ալ , մտայ և հոգւոյ լոյսն ալ :

« Սորվեցէ՛ք ուրեմն , իմսիրելի զաւակներս , կըթութիւն առեք . լուսաւորուեցէ՛ք մտայ և սրտի լուսով , այն պատուական լուսով , որ ինչպէս կ'ըսէր Տիրան , գեղեցիկ բան առելէ չե- պշցի , և գիշելն աւնստուած որեղ երեցնելով , մարդուն սիրած զԱստուած պաշտելու և մարդուոց վրայ գթալու զգացմամբ կը նուն : Տա՛ն երկինք , որ ձեր բանականութիւնն ընդարձակուի այս գիշերուան լուսոյննման , որ առաջ պարզ ռետնաջահ մ'էր , ետքը կանոթեցներ և մամեր , ետքը աստեղազարդ երկին , և վերջապէս շողջողուն արե մ'եզաւ :

« Կրթուիլը զաւակներս , մօտենալ է Աստուծոյ , որ լոյսն , այսինքն ճշմարտութիւնն է . մինչդեռ տգէտ մնալը , մնալ է այն առհաջ մբութեան մէջ , յորում ինչպէս կ'ըսէր Շուշան , ճարդ ու եւր ննւնելը գերէ , ու ուր երեալը . և որուն մէջ ճարդ ու եւր հայրը և ժաննայ ու եւր հայրը :

« ՈՌ , Աստուած պահէ զձեզ զաւակներս , զձեզ և բոլոր մարդիկները , Գողիաթին մեք բարի շունին նմանելէ , որ իւր կեանքը լուսոյ և մթութեան մէջ կ'անցաւնէ անտարբեր կերպով :

Թ.

ԹՐԹՈՒՐՆԵՐԸ

Սահենով Սանդուխտ անուն փոքրիկ աղջիկ
մը կար :

Ամէն հիմուշաբթի կ'երթար իւր մեծ մօքը
քուլ կ'անցունէր . և որովհետեւ գեղեցիկ և
մեծ պարտէզ մը կար հոն , փոքրիկ աղջիկը կը
վաղէր , կը ցատկէր , և գեղեցիկ պարտէ-
զին անուշաբոյր օդը լեցուն թռոքով կը ծծէր :

Բնաւ բանի մը մասս չ'էր հասցներ . մին-
չե այն ասափիճան , որ բան մը չ'էին արդի-
լած իրեն : Օր մը փոքրիկ գեղձի ծառի մը
վրայ հասուն գեղձ մը տեսաւ . այս գեղձը
ճերմակ էր , վարդագոյն , մանիշակագոյն ,
թաւշանման և սքանչելի կ'երեւար : Սան-
դուխտ անմիջապէս իւր մեծ մայլը միտք բե-
րաւ . և այս գեղեցիկ պտուղն անոր տանիլ
բաղձալով , ձեռքն երկնցուց և փրցուց զայն :
Բայց այս գեղձին տակ իւր փոքրիկ մատնե-
ները կակուղ բանի մը դպչեցան . դիտեց , և
աղաղակ մ'արձակելով նետեց գեղձն և կըր-
ցածին չափ արագութեամբ փախաւ :

Այս կակուղ բանը . . . թրթո՞ւր մ'էր :
Ծէր պարտիզպանն որ անկէց քանի մը
քայլ անդին էր , և ելակի ածուխն մէջ դըտ-
նուող դէշ խոտերը կը փրցունէր , անմիջա-
պէս դէպի ի աղջկան կողմը վաղեց և անձ-
կութեամբ հարցուց անոր թէ ի՞նչ պատահեր
էր :

Սանդուխտ , որ իւր յուզմանէն դեղներ էր ,
պատասխանելու տեղ , իւր մատողին աւագին
վրայ ինկած դեղձը ցուցուց , որուն վրայէն
տակաւին չ'էր զատուեր թրթուրը :

«Ի՞նչ ըսաւ պարտիզպանը ինդալով . այս
խեղճ թրթո՞ւրն էր որ այդպէս պոռալ տը-
ռաւ քեզ . բայց աղջիկս , ի՞նչպէս կ'ըլլայ որ
այսպիսի անմեղ արարած մը քեզ այսչափ
վախ կ'աղզէ :

— Ո՛հ , խիստ տղեղ է , ըսաւ Սանդուխտ
նողկանաց շարժումով մը :

— Կը սխալիս , ըսաւ պարտիզպանը , ընդ-
հակառակն անոնցմէ ոմանք շատ գեղեցիկ
են , և այս ալ այնչափ տղեղ չ'է : Նայէ' ,
աւելցուց նա , փոքրիկ աղջիկը դէպի դեղ-
ձին քով մօտեցնելով , և պտուղն ու միջա-
տը մէկտեղ իւր ձեռքն առնելով . նայէ' ,
սիրունիկս , նայէ' , որչափ դեղեցիկ կ'երպով

հագուած է այս թրթուրը : Կարծես թէ դեռ զեցիկ ժապաւէններով զարդարուած թուխ թաւշեայ հանդերձ մը , և մարդարտեայ կը ը կին պսակներ ունի . ստուգիւ միայն բարի Աստուածը կարող է այսպիսի գեղեցիկ բաներն առատութեամբ տալ :

— Այս . . . ստոյգ է . ըստ Սանդուխտ գլուխն առաջ բերելով , բայց իւր մարմինն ետք տանելով , և իւր ձեռքերն ալ ետին պահ հելով :

Ետքը պարտիզանին ներկայութենէն , և քիչ մ'ալ իւր ըրած խորհրդածութենէն խըրատուած , հետաքրքրութեամբ քննել սկսաւ թրթուրն , որ իւր քայլելու սովորական կերպով , գեղձին բարուածիքը կը շրջէր :

«Ո՞հ , իմ բարի Կարապետ պապս (մեծ հայր) , ըստ Սանդուխտ . հիմայ մամիկիս գեղձը պիտի ուտէ :

— Ոչ . աղջիկս , թրթուրները պտուղ չեն ուտեր , այլ տերեւները , կոկնները , ծաղիկները կ'ուտեն , և շատ անգամ ծառն եր պտուղներով մէկտեղ՝ կը վնասէն :

— Կը տեսնե՞ս Կարապետ պապ , թէ այս միջատները չար են եղեր :

— Ոչ . զաւակս . չար ըլլալը չարութիւն

ընելու կամք ունենալն է , թէպէտե զայն կատարելու կարողութիւն ալ չ'ունենայ . մինչդեռ թրթուրները բնաւ չար կամք մը չ'ունին : Անոնք ալ մեզի պէս կ'ուտեն , որովհետեւ ապրելու համար ստեղծուած են : Եւ ճիշդ մեզի պէս իրենց յարմար եկածը կ'ընտրեն : Միայն թէ որովհետեւ անոնց անոնդը մեզի վնաս կ'ընէ , զրկելով զմեզ պտուղներէ որոց բուժնելուն արգելը կ'ըլլան , զանոնք կ'սպանեմք , վասն զի զօրսաւորագոյնն եմք . . . Կը տեսնե՞ս , աղջիկս , որ եթէ այս զործոյն մէջ չարեր կան , փոքրիկ թրթուրները չ'են անոնք :

— Ուրեմն մե՞ք ենք այդ չարերը , հարցուց Սանդուխտ :

— Ուրիշ շատ այսպիսի չարութիւններ ալ կ'ընեմք , սիրունիկս , կրկնեց ծեր պարտիզանն , և զանոնք ընելովնիս ինքզինքնիս չար չեմք համարիք . մեք ալ թրթուրներուն նըման , մեր օրական պիտոյէը ճարելու հարկին տակ կը գտնուիմք , և անոնց պէս մեր այդպէտքերը կը հոգամք , Աստուածոյ մեզ պարգեւած ճարտարութեամբ :

— Արդեօք բարի Աստուածը , թրթուրներուն ալ ճարտարութիւն մը տուած է , հար-

ցուց Սանդուխտ :

— Այս՝, սիրունիկս, նա ամէն կարգի է աշ-
կաց ալ, խիստ մեծերէն սկսեալ, մինչեւ ան-
նըշմարելու ըլլալու չափ փոքր եղողներուն
սորվեցուցած է այն ամէնը, զորս պէտք է
որ գիտնան, բնութենէն իրենց վրայ գրուած
պատճնը անթերի կատարելու համար : Ա-
ռանց այս բանին ի՞նչ պիտի կրնային ընել,
և մեք անդամ ի՞նչ պիտի կրնայինը հնարել :

- Ուրեմն ի՞նչ կ'ընեն թրթուրները ,
- Ինչ ընելին չե՞ս գիտեր :
- Ո՞չ :
- Նախ և առաջ կ'աշխատին :
- Իրենց տղայոց համար :
- Ո՞չ, թրթուրները տղայ չունին :
- Ուրեմն ինչո՞ւ կ'աշխատին :
- Իրենց երկրորդ կեանքին համար: »

Այս խօսքին վրայ փոքրիկ աղջիկն իւր խո-
շոր աչքերը պարախզպանին դարձուց : Ուրիշ
կեանքի մը վրայ խօսիլը լսած էր, բայց
այդ երկրորդ կեանքի խօսքը, մեր անմահ
հոգւոյն կը վերաբերէր . և ասիկայ ալ թրթ-
ուրներէն խիստ հեռու էր :

« Կը տեսնե՞ս, սիրունիկս, թէև ես պար-
տիզպան մ'եմ, և ինձի պատճառած վատ-

սովորին զիս շատ անդամ կը բարկայնեն ,
այսու տմենայինիւ անոնց այշչափ արհամար-
ուած կեանքը խիստ սրաաշարժ է : Երեւա-
կայէ թէ այս խեղճ կենդանիներն այս աշ-
խարհի բոլոր հաճոյքներէն զրկուած են :
Խնչպէս որ քեզի ըսի, ոչ տուն ունին, ոչ ըն-
տանիք , և ոչ խսկ իրիկունը պատսպարուե-
լու համար փոքրիկ բոյն մը : Գարնան միջու-
ցին դրեթէ տակաւին մերկ եղաղ ճիւղերուն
վրայ հաւկիթէն կ'ենեն , և դանդաղ քայլե-
րով անոնց վրայ կը սողան թեթեւ մնունդ
մը գտնելու համար : Տիսուր կերպով իրենց
կարծ ու ծուռ թաթերով իրենց ծնանիլը
տեսնող ճիւղին վրայ փակած , ոչ ծաղկանց
գեղեցկութիւնը կը ճանչնան , ոչ օդոյն քաղց-
րութիւնը , և ոչ հոս հոն վաղելու հաճոյքը
կը վայերեն : Գրեթէ բոլոր մարդոց կ'ազգեն
այն զգուանքը , զոր դու հիմա ցուցուցիր :
Այսու ամենայինիւ բոլոր այս բաներէն մէկն
ալ զանոնք չը կասեցներ , իրենց աշխատու-
թենէն ետ չը դարձուներ : Իրենց բոլոր կեան-
քըն առանց կանդ առնելու աշխատելով կ'ան-
ցունեն , որպէս թէ գիտած ըլլային այս
փոքրիկ կենդանիներն , թէ իրենց կենաց սոյն
օրերը շուտով պիտի անցնին : Միշտ կը

տեսնուի . որ ասոնք տերեւներ և կոկոններ կ'ուտեն , բայց այս ուտեղին իրենց աշխատութեան տարերքները ժողվելու համար է , ինչպէս որ մայր Եղիսաբէթին մանուելիք քթամի ծրագները իւր աղիկատին (էօրէքէ) բոլորափը գիղելը կը տեսնես : Ապա երբ թրժութները բաւական պաշար պատրաստածն , ուտելը կը թողուն , և մանել կը սկսին :

— Քու կեղծդ պէս կարժերով մանա՞ծ մանելու կը սկսին :

— Ո՞հ , ոչ , փոքրիկ իմենգուկս , պատասխանեց Կարապետ պապը , իրենց համար փոքրիկ տուն մը կը մանեն : Նախ և առաջ իմաստութեամբ՝ հանդարս տեղ մը կ'ընտրեն . այնպիսի տեղ մը , յորում ոչ իրենց աշխատութեան միջոցին շփոթութեան մը հանդիպին , և ոչ ալ ետքը գուրս մնան : Ծառի մը ճիւղին տակ , կամ ովատի մը ճեղքուածքին մեջ կը կախուին . ետքը իրենց թելերուն մէջ կը փաթթուին , և անննցմով ինքնինքնին ամէն կողմէ գողցուած կծիկ մը կ'ընեն , այնպէս որ այլ եւս զայն շինող գործաւորը չը տեսնուիր : Եւ ահա այն տաեն է որ ուրիշ կերպարանքի մը կը փոխուինք . ալ թրթուր մը չէ այն , հաղա հաբանեակ մը (chrgsalide) ինչ-

պէս որ կը կոչեն : Յան մը որ ոչ ոտք ունի , ոչ գլուխ և ոչ ո և է ուրիշ անդամ մը . և սակայն երբ մարդ անոր կը դպչի՝ կը շարժի : Մարդ երբէք անոր համար կենդանի մ'է պիտի չըսէր , հաւա պիտի կարծէր թէ հատիկ մ'է , պտուզ մ'է չը դիտեմինչ բանի : Վերջապէս բոլորովին տղեղ բան մ'է այն :

— Եւ իրենց այնչափ լաւ կերպով աշխատենուն վարձն այս պիտի ըլլար , հարցուց փոքրիկ աղջիկը :

— Ո՞հ , բայց այս վիճակը վաղանցիկ վիճակ մ'է , ասիկայ կերպով մը իրենց երկրորդ կենաց նախապատրաստութիւնն է : Երբ ցուրտը , ձիւնն և ամպուտ եղանակները կ'անցնին , երբ արեւը նորէն կ'արդառաւորէ երկրի վրը բայց գմնուող բոլոր կենսաւորներն , այն առեն հարմակաները կը բացուին , և հին թրժուրները , շողշողուն թիթեռնիկներու ձեւով պայծառ օդոցն մէջ իրենց թռիչքը կ'առնուն :

« Սհա այն ատենն է որ իրենց քաջարը տութեան , իրենց համբերութեան , իրենց հնազանդութեան վարձքը կ'առնուն : Երբեմն իսեղճ թրժուրը տերեւներուն տակ կը սոզար , իսկ այսօր ծաղիկներուն վրայ կը թըռ-

չքտի. Հոն անսնց անոյշ բոյրերովը կը մնանի. Հոն անսնց բաժակին մէջէն առաւօտեան ցոզոյ կաթիլները կը խմէ : Թիթեռնիկի փոխուուած թրթուրին համար, այլ եւս ոչ տիտուր աշխատութիւն կայ, ոչ միտյնութիւն և ոչ ընկերութենէ մեկուսացում: Ծաղկաղուարճ պարտէզներու, ծաղկաղգեաց արօններու վըրայ կը բարձրանայ: Օդոյն մէջ իրեն նման ուրախ և թեթեւաշալք ընկերաց խումբի մը հետ կը խաղայ. ամէն աչք իրու դաշնան ամենագեղեցիկ արարածոց միոյն, անոր կը հետեւի: Ամէն մարդ կը սքանչանոյ իւր վըրայ. զինքն առաջ անարդողներն հիմայ իրեն կը նախանձին: Եւ որպէս թէ իր առջի կըրած զրկումներուն վնասը տուժելու համար բոլոր հաճոյիները խօսք մէկ ըրած ըլլային, իւր նոր կերպարանքին մէջ ընտանիք մը և փոքրիկ զաւակներ ունի:

— Ուրեմն փոքրիկ թիթեռնիկները մեծ թիթեռնիկներուն տղաքներն են, հարցուց Սանդուխտ:

— Ոչ, սիրունիկս, պատասխանեց Կարապետ պապը. մեծերը, պղտիկները, ճերմակները, դեղիները, դիշերուան թիթեռնիկները, ասոնց ամէն մէկը, զատ զատ տեւ-

սակներ են, որք աւելի կամ պակաս կ'ապրին, և հաւկիթներէն ենելու համար աւելի կամ պակաս ժամանակ կ'անցընեն: Թիթեռնիկներուն տղաքները, փոքրիկ հաւկիթներ են, զորս իրենց մայրելը մեծ խնամով ծառերու կեղեւներուն վրայ կը փակցընեն: Եւ երբ ժամանակը դայ, անսնք փոքրիկ թրթուրներու ձեւով հաւկիթներէն կ'ենեն: Այս փոքրիկ թրթուրներն ալ ձիշդ իրենց ձնողաց անցած փոքրերէն կ'անցնին: Եւ եթէ իրենք ալ իրմանց գործերը գործած և աւարտած են, մի և նոյն կերպարանափոխութիւնն և մի և նոյն վարձքը կը ստանան:

— Իրաւունք ունիս թրթուրները սիրելով վրդ, ըստ տղան. զի ահա կը տեմնեմ որ ասոնք քաջասիրտ անամնիկներ են. հիմայ տուր ատիկայ որ ըստ մը զնիեմ: »

Զայս ըսելով փոքրիկ աղջկը դեղձն և թրթուրը պարտիզպանին ձեռքէն առաւ, և ըուռթեամբ դիտել սկսաւ:

« Զարմանալի բան մ'է այս, ըստ վայրկեան մ'ետք. թրթուրին նկատմամբ հիմայ քու ինձի պատմած պատմութիւնդ խիստ կը նմանի բուն խոկ մեր պատմութեան, զոր մամիկս ինծի պատմած է: Խիստ աղէկ գիտեմ

թէ մենք բանաւոր անձեր եմք և թրթուրներն անրան կենդամիներ : Գիտեմթէ անոնք մեզի պէս հոգի մը չ'ունին , թէ հանդերձեալ աշխարհի մը մէջ մեր կեսնքն անվախճան պիտի լինի , մինչդեռ թիթեռնիկներն երկրի վրայ կը մեռնին : Բայց անոնց և մեր մէջ եղած նմանութեան կէտը սա է որ , մեր բաժին ալ , ինչպէս ինչպէս կ'ըսէ մայրիկը , ունաշխարհիս մէջ աշխատիլը , մեռնին և նուրէն յարութիւն առնելն է :

Ս.յո' այնպէս է , զաւակս , պատասխանեց պարտիզպանը , նորէն յարութիւն առնելը : Եւ եթէ մեզ սահմանուած աշխատութեան պարաքը կատարեմք . . . յափաենակա'ն վարձքը . . . :

Ա. Ո. Ա. Կ Ա.

ԽԵԶԱՓԱՌ ԵՒ ԻՒՐ ԶԱԳՆ

Գիտնանք ինչո՞ւ չեն ազդեր
Շատ անդամ խրատք ի սիրտ մեր .
Վասն զի շատ խրատառուք ,
Թէե առատ են խրատուք
Գործովքն իրենց են իրենց ներհակ ,
Զայս պիտի ցուցնէ սոյն առակ :

« Միթէ այդպէս պէտք է քալել իմ ձագուկ .
Ս.յլ կենդամիք պիտ չը ատ՝ն քեզ պատկառուկ
Իրենց ուղիղ և վայելուչ ընթացքով ,
Իրենց պատշաճ և ընտանի քալուածքով :
Ս.յլ քո խոտոր ընթացք , անոյշ իմ զաւակ ,
Բոլոր կենդամնեաց մէջ մեզ ծազը ու ծանակ
Պիտի ընէ , պիտ բերէ մեզ մեծ ամօթ ,
Պիտի տիսրի մեր բարեկամն ու ծանօթ .
Ինչո՞ւ ձագուկ , աստուծմէ լոյս աչք առելո՞ ,
Որպէս զի այլ արարածոց ուշադիր

Ըլլաս ու անոնց նմանիս
Իուղիղ դնացից հոդ տանիս :
Գիտցի՛ր որդեակ զի քայլել
Յառաջելոյ համար է .
Ետ ետ քայլել չէ վայել
Մեզ նախատինք կը բերէ .
Կենաւորաց գլուխն ոտից
Եղած է միշտ առաջնորդ .
Եւ ընութեան այս ընթացից
Գու լոկ չեղար հետեւորդ :

Ապա իմ որդի ,
Եթէ յաշխարհի
Կուզես ունենալ
Անուն փառացի ,
Ուզզէ նախ քո քայլ

Ապա և գործքու ալ
Ուղղէ ըստ օրինաց
Բնութեան կենդանեաց : »

Այսպէս կըսէր մեր խեչափառն օր միը փոքրիկ
մէկ ձադուն,
Եւ իւր ձադուն արդարապէս կը բորբոքէր
բարկութիւն :

Ուստի կըակ կտրած մէկէն
Սըդարացի իր զայրոյթէն ,
«Մայրիկ , ըստաւ , ի՞նչու այդշամի տարապարտ ,
Կը նախատես զիս որ բնաւ չեմ՝ յանցապարտ .
Ինչ որ տեսած եմ ի քեզ
Չէ որ նոյնը կ'ընեմ և ես .
Չէ որ դու ալ աչք ունիս ,
Ինչու արդեօք քեզ թողուս և դատես զիս .
Գիտեմ մայրիկ որ իմ քարտածքս ուղիղ չէ
Այլ դու նախ քան զիս իրատել քեզ ինք
ուղղէ ,

Որով ապա քո խըրատ
Ինձ պիտ աղղէ խիստ ու շատ » :

Այսպէս ահա ազնիւ ծընողք ձեր զաւակաց
մոլորութեան
Դուք իսկ ձեղէն կ'ըլլաք պատճառ չար պըտ-
ղովք ձեր անկըթութեան

Զի ձեր դործ
Իբրեւ փորձ
Առաջնորդ ,
Ուահահորդ
Իբարին
Կամ յոռին
Կը լինին
Ձեր զաւկին :

Ա.Ռ.Ա.Կ Բ.

ՃՊՈՒՈՆ ԵՒ ՄՐՁԻՒՆ

Ճպուռն երգելով մաշած լինելով բոլոր ամառ
նը ,
Զինք խիստ չքաւոր դտաւ երբ եկան բուքե-
րըն ու սառնը .

Զունէր և ոչ վշուրիկ մի
Ճճեկի մը և կամ ճանենի :
Ուստի դրացի մշջման դիմեց
«Խիստ սովեալ եմ աղաղակեց .
«Քամի մը հատիկ փոխ տուր ինձ , կ'ըսէր ,
ապրելոյ համար ,
Մինչ ցընոր դալուն պիտի վըճարեմ զայն ամ-
բողջաբար :

Շահ մայր անթերի

Ընդունիս պիտի

Նախ քան զամիս օդոստոսի ,

Կ'երդում հոգի , հաւտա լինձի :

—Փոխատու չէ երբէք մըջիւն

Ա.յա ալ իւր դոյզն է պակսութիւն .

Տաք ատեններն ինչ կ'ընէիք .»

Լսու մըջիւնն այս փոխառուին :

«Գիշեր ցերեկ , ո՞հ չը ցաւիք

Երդ կ'երդէի անցորդներին ,

—Կ'երդէիք հա՞ , ո՞հ խիստ աղէկ

Գացէք հիմա ալ պարեցէք :»

(Աս Ֆոնքի)

(Թարգ.) Թ. Կէջիկիրեսն

Ա. Ռ. Ա. Ծ Ն Ե Ր

Կրակը ոսկւոյն փորձաքալն է , ոսկին կնոջ ,
և կինը առն :

(Քրանքին)

Զուկն և հիւրը երեք օր վերջ գէշ կը հոսին:
(Նոյն)

Առաքինի մարդը նման է այն պաղատու
ծառին , զոր կը քարկոծեն , նոյն իսկ նորա
պտուլը վայելելու համար :

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿԻ

Թէ նոր բանելը թէ հին ,

Երկնաւոր թէ երկրային ,

Մարմնաւոր թէ անմարմին ,

Խմաստ առանց ինձ չունին .

Անուշն ինձմով է անուշ .

Ինձմով կ'ապրին նուռն ու նուշ .

Կանաչ դեղին զիս դիտեն ,

Ա.յլ դոյնք ինձ բնաւ ծանօթ չեն :

Զեմ քաղաքի կամ գեղի

Կամո և է մէջ տեղի ,

Ա.յլ ամէն տուն , բուն , կայան ,

Շէն , անապատ , ապարան ,

Նըկուղ , անդունդ , բանտ , գարան ,

Իմ տեղիք են բնակութեան .

Ես ի յերկինս եմ ի վեր ,

Զիս երկրի վրայ մի վնասեր .

Ա.յլ թէ չի՞նես ի խոնահ ,

Գիտցիր բնաւ զիս չես գտնար .

Ոչ չար եմ ես , ոչ բարի .

Ոչ ժամ , ոչ օր , ոչ տարի ,

Ոչ շաբաթ և ոչ ամիս

Երբէք տեսած չունին զիս .
 Ա.յլ ժամանակն անդրաւ ,
 Միջին որդի զիս ծնաւ .
 Ա.ստուծոյ հետ ես չկամ ,
 Ոչ ալ մարդոց քով կը դամ .
 Դեռ չըդիտցա՞ր թէ ինչ եմ .
 Կ'ուզե՞ս որ քիչ մ'ալ ըսեմ .
 Ա.ւուր ժամուց թիւ դիտե՞ս ,
 Ա.յդ թիւ ինձ խիստ մօտիկ է .
 Իսկ թէ զօրքիս թիւն ըսես ,
 Զորս հարիւրէն պակաս չէ .
 Թէ չը դիտցար , ընթերցող ,
 Ա.յդ անունդ ալ դիտելով ,
 Կ'ըսեմ որ դու չես դիտող
 Օժտեալ բնածիր հանճարով : (1)

թ. Կ.

(1) Այս հանելուկն առաջին անգամ լուծողին
պատկերազարդ. Գաղղիերէն գիրք մը պիտի նը-
ուիրուի :



15-

Ա. Տ.

24
X5

10-

0004006

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004006

